

Երեւանի մամուլի ակումբի՝ 2001թ. ֆինանսական գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ՝

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 2001թ. հունվարի 1-ից մինչև 2001թ. դեկտեմբերի 31-ը, ստացված միջոցների ընդհանուր գումարը, ներառյալ նաև 2001թ. հունվարի 1-ի մնացորդը՝ 54,845,728 դրամ 62 լումա, կազմել է 105,377,728 դրամ 62 լումա:

ԵՄԱ անդամների անդամավճարները կազմել են՝ 105,000 դրամ, դրամաշնորհներ Բաց հասարակության ինստիտուտի ԶԼՄ-ների ցանցային ծրագրի՝ 6,630,000 դրամ, դրամաշնորհ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի՝ 34,348,000 դրամ, դրամաշնորհ Բաց հասարակության ինստիտուտի (Արեւելք-Արեւելք ծրագիր)՝ 4,535,000 դրամ, դրամաշնորհ Եվրոպայի Խորհրդի՝ 972,000 դրամ: Ժամանակավոր ֆինանսական օգնությունը կազմել է 1,257,000 դրամ: Փոխարժեքային դրական տարբերությունը կազմել է 1,257,000 դրամ եւ 804,000 դրամ ստացվել է բանկային տոկոսներից:

Հաշվետու ժամանակահատվածում ծախսվել է **99,662,000** դրամ, որից.

1. Աշխատավարձի վճարման համար ծախսվել է 42,119,000 դրամ:
2. Աշխատավարձից եկամտահարկ եւ կենսաթոշակային հիմնադրամ մուծումները կազմել են 10,894,000 դրամ:
3. Հիմնական միջոցների ձեռք բերման համար ծախսվել է 4,724,000 դրամ:
4. Բանկային ծառայությունների համար մուծվել է 407,000 դրամ:
5. Կենսաթոշակային հիմնադրամին տուգանքը կազմել է 3,000 դրամ:
6. Կապի ծախսերը կազմել են 3,318,000 դրամ:
7. Գրասենյակային, գրենական պիտույքների ծախսերը կազմել են 1,703,000 դրամ:
8. Տպարանային ծախսերը կազմել են 5,121,600 դրամ:
9. Մամուլի ասուլիսների, սեմինարների եւ կլոր սեղանների կազմակերպման ծախսերը կազմել են 6,561,000 դրամ:
10. Գործուղման ծախսերը (ներառյալ հարկերը) կազմել են 14,185,000 դրամ:
11. Գրականության ձեռք բերման համար ծախսերը կազմել են 79,000 դրամ:
12. Պարբերական հրատարակությունների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 39,350 դրամ:
13. Կոմունալ ծախսերը կազմել են 1,509,000 դրամ:
14. Չծախսված գումարի վերադարձը շնորհատուներին կազմել են 281,000 դրամ:
15. Չփաստաթղթավորված (ակտով) ծախսերի դիմաց 15% եկամտահարկը կազմել է 29,000 դրամ:
16. Ծառայությունների եւ ապրանքների կանխավճարը (2002թ.) կազմել է 4,296,000 դրամ:
17. Ապրանքների ձեռք բերման համար կազմակերպություններին վճարված ԱԱՀ կազմել է 350,000 դրամ:
18. Տրանսպորտային ծառայությունների ծախսերը կազմել են 4,742,000 դրամ:
19. Գույքահարկի վճարումը կազմել է 7,000 դրամ:
22. Պետ. պոշլինայի վճարման ծախսերը կազմել են 67,000 դրամ:
23. Ավտոտրանսպորտի պահպանման ծախսերը կազմել են 61,000 դրամ:

24. Փոխարժեքի բացասական տարբերությունը կազմել է 1,527,000 դրամ:

25. Նյութական օգնության ծախսերը կազմել են 25,000 դրամ:

Շնորհատու կազմակերպությունների պահանջի համապատասխան ժամանակին նրանց է ներկայացվել առանձին ծրագրերի եւ ծախսվող գումարների ամբողջ հաշվետվությունը:

ԵՄԱ կանոնադրության համաձայն բոլոր ծախսերը համաձայնեցվել են ԵՄԱ վարչության հետ:

Բոլոր եկամուտները եւ ծախսերը հիմնավորված են փաստաթղթերով, որոնք պահվում են մամուլի ակումբի հաշվապահությունում:

2002թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդը կազմել է **5,716,000** դրամ:

Սույն հաշվետվությունն ընդգրկում է միայն այն գործունեությունը, որտեղ ֆինանսները Երեւանի մամուլի ակումբն է տնօրինել: